ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

«12» 01 2012թ.                N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $77^1$-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի կողմից դեկտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները, արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 6 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ        Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

132-12
«12» 01 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2011թ. թիվ 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՎ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԱԼՎԱՐԴ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2[1] կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 37-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Այգեկի գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ-1 որոշումը, Արմավիրի մարզի Այգեկ գյուղի բնակիչ Գենետա Եղիազարյանի դիմումը՝ իրեն խնամակալ նշանակելու մասին

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել խնամակալություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի բնակիչ, 20.12.1962 թվականին ծնված, դատարանի վճռով անգործունակ ճանաչված Ալվարդ Առուստամյանի նկատմամբ:
2. Խնամակալ նշանակել մորը՝ Արմավիրի մարզի Այգեկ գյուղի բնակիչ Գենետա Եղիազարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 21
գ. Այգեկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2011թ. թիվ 22

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N39 արձանագրային որոշման հավելվածի 4-րդ մասի 11-րդ կետը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի տարածքում գործող առևտրի օբյեկտներում 2012 թվականի համար ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 26

գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

---

01 դեկտեմբերի 2011թ. թիվ 10

## ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 46-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի N102-Ն հրամանը

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Անցկացնել ամենամյա գույքագրում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանում, մշակույթի տանը և գրադարանում:
2. Ստեղծել գույքագրման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
3. Գույքագրման հանձնաժողովի նախագահ Մայիս Աբրահամյանին՝ գույքագրումը սկսել 2011 թվականի դեկտեմբերի 2-ին ավարտել 2011 թվականի դեկտեմբերի 22-ին:
4. Գույքագրման փաստաթղթերը ներկայացնել ավագանու հաստատմանը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 01
գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկի գյուղական
համայնքի ղեկավարի
2011 թվականի [illegible] «07»-ի թիվ 10 կարգադրության

# ԿԱԶՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | - Մայիս Աբրահամյան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ |
| Հանձնաժողովի անդամներ | - Վարուժան Խաչատրյան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ավագանու անդամ |
| | - Աշոտ Գևորգյան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ավագանու անդամ |
| | - Գայանե Սարգսյան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար |
| | - Գոհար Հովհաննիսյան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19 դեկտեմբերի 2011թ. թիվ 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Խրախուսել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողներին՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 19
գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկի գյուղական
համայնքի ղեկավարի
2011 թվականի դեկտեմբերի «19»-ի թիվ 11 կարգադրության

# ԽՐԱԽՈՒՍԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Աբրահամյան Վարուժան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավար | - 110,0 հազար դրամ |
| 2. | Աբրահամյան Մայիս - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ | - 80,0 հազար դրամ |
| 3. | Սարգսյան Գայանե - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | - 77,0 հազար դրամ |
| 4. | Ավետիսյան Ալվարդ - | գրադարանավար | - 35,0 հազար դրամ |
| 5. | Աբրահամյան Կարինե - | ակումբավար | - 35,0 հազար դրամ |
| 6. | Արիստակեսյան Հուսիկ - | մարզիչ | - 35,0 հազար դրամ |